

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

*Արքայական խոսքը մեր կմնա հավետ...
Վահան Տերյան*

1. Գծով միացրո՛ւ հեղինակի անունը համապատասխան ստեղծագործությանը: (2,5 միավոր)

Ղազարոս Աղայան	«Մուտլիկ որսկանը»
Հանս Քրիստիան Անդերսեն	«Չիպուլինոյի արկածները»
Հովհաննես Թումանյան	«Կարմիր Գլխարկը»
Շառլ Պերրո	«Անահիտ»
Ջանի Ռոդարի	«Ջրահարսը»

2. Օգտվելով միայն տրված բառերի արմատներից և ածանցներից՝ ստացի՛ր նոր բառեր: (1 միավոր)

նախշուն, նկարիչ _____
 գթասիրտ, անձանոթ _____
 մայրաքաղաք, բալենի _____
 ուղեգիր, ծառատունկ _____

3. Յուրաքանչյուր բառի համար գրի՛ր երկու հոմանիշ և մեկ հականիշ: (3 միավոր)

	հոմանիշ	հոմանիշ	հականիշ
տարակուսել			
առաքինի			
կազդուրվել			
աչալուրջ			
երկչոտ			

4. Վանդակներում լրացրո՛ւ այնպիսի տառեր, որ տողերում կարդացվեն գոյականներ, իսկ սյունակներում՝ բայ ածականի հոմանիշները: (4 միավոր)

	ամաճի	
	մաս	
	ինվո	
	յգ	
	իղ	

5. Բացատրի՛ր հետևյալ դարձվածքների իմաստը: (2,5 միավոր)

բերանը ջուր առնել _____

աչքը ջուր կտրել _____

գլխի գցել _____

նույն տեղում դռփել _____

աշխարհով մեկ լինել _____

6. Հիշի՛ր և գրի՛ր տրված առած-ասացվածքներից յուրաքանչյուրին իմաստով համապատասխանող ևս մեկ առած կամ ասացվածք: (2,5 միավոր)

Բռունցքն ավելի գորեղ է, քան տասը մատը:

Ուրիշի ձեռքին նայողը սոված կմնա:

Իմանալու համար պետք է հարցնել:

Գործը վաղվան մնաց, իմացի՛ր՝ կորավ-գնաց:

Աշխատող խոփը կփայլի:

7. Վերևում տրված առած-ասացվածքներից որևէ մեկը դարձրո՛ւ վերնագիր և պատմություն՝ ն հյուսիք: (4,5 միավոր)

Ընդհանուր միավորը՝ _____

Ամիս, ամսաթիվ _____

Անուն, ազգանուն, հայրանուն _____

Դպրոց _____

Դասարան _____